Վահան Թոթովենց

Վանե՛ շողերդ . . .

Վ…-ին

Վանե՛ շողերդ փայլուն ու փարթա՞մ,
Հանե՛ շորերդ ճերմա՞կ, լուսահյու՞ս,
Դժգույնը հագի՛ր:
Վերջալույս եղի՛ր:
Ես օրոր ըսեմ, ես օրոր հյուսեմ
Լացող ուռիին երազներուն տակ:
Գորշ շորեր հագիր,
Ցայգը զգեցիր:
Ծաղիկը եղի՛ր լու՞ռ ու դալկահար
Ստեղծե քաղցր տրտում հոգվույդ մեջ
Տրտում երազով ստինքներդ քողե,
Շուրթիդ վարդերի թախծությամբ ցողե՛.
Տո՛ւր ինձ համբույր մը, դու դժգույն ծաղիկ,
Ծծեմ թախիծը դալուկ փերթերեդ,
Այգի հյուս կենին մեջեն օրորվիր,
Օրորվիր
Սուգի՞ պես…
Եղիր դժգույն,
Եղիր քաղցր,
Տրտումն է քնքուշ,
Տրտումն է օրոր:
Շաղե՛ արցունքներդ այգի ցողին հետ,

Թող վարդը ծծե,
Թող վարդը ըմպե
Բաղադրությունը լույսին ու թախծին,
Վարդը թող ըլլա
Ավելի խորի՛ն,
Ավելի քնքու՛շ,
Քնքուշն է տրտում:
Հանե՛ շորերդ ճերմա՛կ, լուսեղե՛ն,
Վանե՛ շողերդ փայլո՛ւն ու փարթամ:

1917 թ.